




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆ - ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ՄԱՍՈՒԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԱՍՊԵՐԱՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆ
ՍՏՊԵՆՍԻԱՆԻ
ՄԱՍՈՒԿԱԿԱՆ

ISSN 1829-0280

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER


OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2022 [2]

ԵՐԵՎԱՆ


ՌՈՐԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

 <https://orcid.org/0000-0003-3318-3483>

ԲԵԼԼԱ ԳԱՐԻԵԼՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

 <https://orcid.org/0000-0002-7428-7900>

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ

JEL Y30

DOI: 10.52174/1829-0280_2022.2-178

«Անտարես» հրատարակչությունը հայերեն թարգմանությամբ լույս է ընծայել Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռիչարդ Հ. Թեյլերի «Սխալ վարքագիծ» աշխատությունը (խմբագիր՝ Վահագն Խաչատրյան)¹: Հեղինակը գրքի բնաբան է ընտրել Վիլֆրեդո Պարետոյի այն խոսքերը, թե «Քաղաքատնտեսության և առհասարակ ցանկացած հասարակական գիտության հիմքը, ակնհայտորեն, հոգեբանությունն է: Գուցե կգա այն օրը, երբ մեզ կհաջողվի հասարակական գիտությունների օրենքները արտածել հոգեբանության սկզբունքներից»: Եվ՝ ոչ պատահականորեն: Սա, ըստ էության, նշում է գրքում արծարծվող հարցերի վերլուծական որոնումների ուղղությունը: Ինչ խոսք, ընդլայնվել են տնտեսագիտության սահմանները՝ յուրացնելով նաև այլ գիտությունների տարածքներ, և, ինչպես ասում է Ջեյ Խիրշլույֆերը, դառնալով «հասարակական գիտության ունիվերսալ քերականությունը»²: Բայց արդյո՞ք տնտեսագիտության տեսության առաջադրած դեդաուսներն օգնում են իրականությանը: Այստեղ է, որ Ռիչարդ Հ. Թեյլերը տնտեսագիտությունը «սուզում է» վարքագծային ոլորտում՝ բազմաթիվ օրինակներով ցույց տալով, որ տնտեսական մտածելակերպը փոփոխության կարիք ունի, որ «...իրական կյանքում մարդկանց վարքագիծն ամեն ձևով տարբերվում է տնտեսագիտական մոդելներում բնակվող մտացածին արարածների վարքագծից: Երբեք նպատակ չեմ ունեցել ասելու, որ մարդկանց առումով ինչ-որ բան սխալ է, մենք բոլորս մարդ արարածներ ենք՝ homo sapiens: Ավելի ճիշտ՝ խնդիրը հենց տնտեսագետների կողմից կիրառվող մոդելն է, մի մոդել, որում homo sapiens-ը՝ բանական մարդը, փոխարինվել է մտացածին արարածով, որի անունն է homo economicus՝ տնտեսվար մարդ կամ ռացիոնալ մարդ, որին ես հակիրճ սիրում եմ անվանել «Տնտես»: Ի տարբերություն Տնտեսների մտացածին աշխարհի՝ իրական կյանքում մարդիկ հաճախ սխալ վարքագիծ են դրսևորում, իսկ սա նշանակում է, որ տնտեսական մոդելները բազմաթիվ սխալ կանխատեսումներ են անում,

¹ Ռիչարդ Հ. Թեյլեր, Սխալ վարքագիծ, Եր., «Անտարես», 2022, XVIII+470 էջ:

² Титова Н.Е., История экономических учений. М., 1997, с. 241.

որոնք կարող են ունենալ շատ ավելի լուրջ հետևանքներ...: Փաստն այն է, որ ոչ մի տնտեսագետ չկարողացավ կանխատեսել 2007–2008 թթ. տնտեսական ճգնաժամը՝ դեռ շատերը կարծում էին, որ թե՛ ճգնաժամը և թե՛ դրա հետևանքները պարզապես լինելու բան չէին»³: Թերևս, հենց այդ մարդկային վարքագծի սխալ պատկերացման վրա է հիմնված, ինչպես հաճախ բնութագրում են, տնտեսագիտության «կայսերական գոռոզամտությունը»: Դա բացատրվում է նախ նրանով, որ «քաղաքական խորհրդատվության» դաշտում հասարակական մյուս գիտություններին հատկացվում է «ստորադաս» տեղ, և ապա, որպես «հիմնայուն», տնտեսագիտությունը կառուցված է «մի քանի հիմնարար ելակետային դրույթների վրա»՝ զուգահեռվելով ֆիզիկային: Սակայն «ռացիոնալ ակնկալիքներ» կամ «օպտիմալացում գումարած հավասարակշռություն» տնտեսագիտության համակցությունը, որը բացակայում է մյուս հասարակական գիտություններում, չի գծագրում երևույթների իրական բովանդակությունը: Իսկ դա, թերևս, պայմանավորված է բնական գիտությունների օրինաչափությունները տնտեսագիտության մեջ տեղայնացման շարունակվող իներցիայով:

Կալիֆոռնիայի (Բերկլի) համալսարանի պրոֆեսոր, արդի վերլուծական փիլիսոփայության ներկայացուցիչ Ջ. Սերլը նկատում է, որ երբ ինքը Օքսֆորդի ուսանող էր, տնտեսագիտության տեսությունը սովորեցնում էին որպես բնագիտական առարկա: Գուցե և համարվում էր, որ տնտեսագիտությունը ինչ-որ բանով տարբերվում է ֆիզիկայից, սակայն լոկ այն չափով, որ չափով քիմիայի կամ կենսաբանության առարկան նման չէ ֆիզիկական գիտելիքների առարկային: Արդյունքները դասավանդում էին իբրև գիտական տեսություններ: Ուստի սերտում էինք այն դրույթը, որ խնայողությունները հավասար են նույն ձևով, ինչպես որ մասսայի և արագացման ուժի արտադրյալի հավասարության պոստուլատը: Ձեռնարկատերերը, իրենց պահվածքով լինելով ռացիոնալ, ապրանքը վաճառում են՝ հավասարեցնելով սահմանային ծախսերը և սահմանային եկամուտը, իբր խոսքն այն մասին է, որ մարմինների ձգողականությունն ուղիղ համեմատական է իրենց զանգվածին և հակադարձ համեմատական՝ դրանց միջև տարածության քառակուսուն: Ոչ մի տեղ և երբեք չի հիշատակվել տնտեսագիտության տեսության կողմից նկարագրվող մարդու հավատքի և նրա արմատացած այլ սովորույթների հետ կապված իրական կախվածության մասին, որոնք միանգամայն տարբեր են ֆիզիկայում կամ քիմիայում ծագող կախվածությունից: Զուր չէր նոր պատմական դպրոցի հայտնի տնտեսագետ Գ. Շմոլերը մերժում մաթեմատիկական մոդելների կիրառումը, քանի որ «մարդկային հոգեբանության ռեակցիաները չափից շատ բարդ են դիֆերենցիալ հաշվարկների համար»⁴: Ռիչարդ Հ. Թեյլերի աշխատության ամբողջ շարադրանքը մարդկային հոգեբանության պեղումներ են և ցուցադրում են վերջինս ծնող պատճառները: Օրինակ՝ մթերային խանութներն առաջարկում են ապրանքների միլիոնավոր զուգակցություններ, որոնք տեղավորվում են ընտանեկան բյուջեում, սակայն հազիվ թե կարելի է պնդել, որ մարդկանց կատարած բոլոր ընտրություններն օպտիմալ են, կամ հոգեբան-

³ Ռիչարդ Հ. Թեյլեր, նշվ. աշխ., էջ 58:

⁴ Селичмен Б., Основные течения современной экономической мысли. М., 1968, с. 27.

ների կողմից փաստագրված է, որ մարդիկ ընտրություններ կատարելիս անկանխակալ չեն, կամ «Տնտեսի համար նախորդ օրերին սննդի համար կատարած ծախսը որոշիչ դեր չի խաղում, թե ինչ քանակությամբ սնունդ ուտի այսօր» և այլն, և այլն: Այն, որ մարդիկ ցուցաբերում են «Տնտեսի» տրամաբանությանը չհամապատասխանող պահվածք գործունեության բոլոր ոլորտներում, ավելի շուտ օրինաչափություն է, քան բացառություն, հետևապես՝ «այն տեսությունները, որոնք հենվում են այն ենթադրության վրա, որ բոլոր մարդիկ Տնտեսներ են, պետք է մերժվեն»: Այստեղ է, որ Ռ. Հ. Թեյլերն առաջադրում է երևույթները մեկնաբանելու «տնտեսագիտության տեսության կատարելագործված տարբերակի» հայեցողության ստեղծման անհրաժեշտությունը՝ որպես «վարքագծային տնտեսագիտություն», որը «նոր գիտություն չէ, սա նույն տնտեսագիտությունն է, պարզապես զգալիորեն հարստացված է հոգեբանության և այլ հասարակական գիտությունների նվաճումներով»⁵:

Աշխատության վերլուծությունները ոչ թե տեսաբանություններ են, այլ կիրառական ոլորտից փաստարկներ, որոնք խզվածություններ են դրսևորում ավանդական տեսությունների մոդելների նկատմամբ: Միաժամանակ հարկ է նկատել, որ, այսպես կոչված, «սխալ տնտեսագիտության» կազմավորման ուղին մեկնաբանվում է այլևայլ տեսությունների հետ ունեցած աղերսների, քննադատության կամ մերժելու դրվածքներով: Եվ, այս իմաստով, գրքում կարելի է հանդիպել հայ ընթերցողին հայտնի և անհայտ բազմաթիվ անունների՝ Ադամ Սմիթ, Հերբերտ Սայմոն, Կահնեման և Տվերսկի, Դանիել Բեռնուլի, Գարի Բեքքեր, Ֆոն Նեյման և Մոզես Նեյման, Վեռնոն Սմիթ, Քեննեթ Էրոու, Ջոն Հիքս, Փոլ Սամուելսոն, Միլթոն Ֆրիդմեն, Ջոն Մեյնարդ Բեյնս, Ֆրանկո Մոդիլյանի, Ջոն Նեշ և շատ ուրիշներ:

«Ենթադրաբար անկարևոր գործոններ», «Տիրապետման էֆեկտը», «Ցուցակը», «Արժեքի տեսությունը», «Կալիֆոռնյան երազանք», «Գանակոծում», «Մտային հաշվապահություն», «Պոկերի սեղանի շուրջ», «Մխալ վարքագիծն իրական աշխարհում», «Արդարության խաղեր», «Ամերիկյան ֆուտբոլ» և շատ ու շատ՝ ավանդական տնտեսագիտությունից դուրս, առաջին հայացքից անհամակարգ թվացող շարադրանքներում բացահայտվում են վարքագծային տնտեսագիտության շերտերն ու տիրույթները: Ջ.Մ. Բեյնսը մի անգամ նկատել է, որ դժվարությունը ոչ թե նոր գաղափարների յուրացումն է, այլ հին պատկերացումներից հրաժարվելը: Օրինակ՝ Ռ. Հ. Թեյլերը բերում է տնտեսագիտության հիմնարար տեսության աքսիոմատիկ դարձած այն դրույթը, թե պահանջարկի կորերը ցած են իջնում, իսկ առաջարկի կորերը վեր են բարձրանում: Այսինքն՝ որքան բարձր է վարձատրությունը, այնքան ավելի շատ է աշխատանքի առաջարկը: Մինչդեռ ընդհանրության մեջ այս բնորոշումները վիճարկելի աղերսներ ունեն: Այսպես, թվում է՝ եթե տաքսու վարորդների վարձատրությունը կրկնապատկվի, ապա ավելի շատ մարդիկ կուզենան տաքսի վարել նաև այն օրերին, երբ հնարավորություն կա ավելի շատ վաստակելու, և քիչ վարպետներ կուզենան այդ օրը հանգստանալ: Մինչդեռ, գիտափորձը ցույց է տվել՝ որքան բարձր է վարձատրությունը, այնքան վարորդներն ավելի քիչ են աշխատում. հատկապես սկսնակ վարորդների համար յուրաքանչյուր

⁵ Ռիչարդ Հ. Թեյլեր, նշվ. աշխ., էջ 7-12:

օրվա համար նպատակային եկամուտ սահմանելը կատարում է ինքնատիրապետման գործառույթ⁶:

«Սխալ վարքագիծը» իր հիմնավորումներն է գտնում այնպիսի ոլորտներում, ինչպես՝ թոշակի անցնելու համար արվող խնայողությունների, հիպոթեկի ընտրության, արժեթղթերի շուկայում արվող ներդրումների ժամանակ կամ «հեռանկարային տնտեսություն», կրթություն, ավիացիա, լեռնագնացություն և այլն՝ հաստատելով նոր մոտեցումների անհրաժեշտության իրավունքը:

Տնտեսագիտության տեսությունը գերազանցապես հիմնավորված չէ էմպիրիկ դիտարկումներով, իսկ ռացիոնալ ընտրությունից եկող աքսիոմները բխեցվում են անկախ այն բանից, թե դրանք «որևէ կապ ունեն, թե ոչ այն ամենի հետ, ինչին մենք առնչվում ենք մեր առօրյա կյանքում»:

Տնտեսագիտության այն ոլորտը, որը վարքագծի դիտակետից ներքին բովանդակության ընդլայնման և նոր լուսաբանումների կարիք ունի, մակրոտնտեսագիտությունն է: Բայց այս բնագավառում Զ.Քեյնսի սկսած գործը շարունակություն չունեցավ: Մինչդեռ, մարդկանց վարքագիծն էական է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության լուծումների առումով՝ հատկապես ֆինանսական ճգնաժամերի ժամանակ: Պատճառների ճանաչողական չափումները մնում են նույն հարթության մեջ՝ մի դեպքում պաշտպանելով Քեյնսի տեսակետը, թե կառավարությունը պետք է իրականացնի նոր ներդրումներ, իսկ մի այլ դեպքում՝ թե դա կտանի բյուջեի ճգնաժամի կամ գնաճի: Իսկ սպառողի վարքագծային նրբությունների հաշվառումը կամ ակտիվ ձեռներեցությամբ զբաղվելու միջոցառումները կարող են շահեկան արդյունքների հանգեցնել:

Ռ. Հ. Թեյլերի գրքի վերաբերյալ էքսկուրսը կապված է որոշակի դժվարությունների հետ: Սխալ վարքագծի մասին նրա մեկնությունները՝ կառուցված բազում օրինակների վրա, ավելի լավ ու ավելի համոզիչ անել, քան արված են գրքում, գրեթե հնարավոր չէ: Ուստի փաստեր և նորից փաստեր, որոնք թույլ կտան «փոխելու մեր գործելաոճը», «սխալ կանխատեսումներից խուսափելու համար», իսկ նրանք, «ովքեր համառորեն կառչել են միայն Տնտեսներից բաղկացած մտացածին աշխարհից, անտեսանելի ձեռքի փոխաբերեն սպիտակ դրոշ կծածանեն»⁷:

Նա իրեն համարում է այն «ուխտագնաց» տնտեսագետը, որն ապագան տեսնում է վարքագծային տնտեսագիտության մեջ: Իսկ «ընթերցողներին իմ միակ խորհուրդը հետևյալն է՝ այլևս մի կարդացեք, եթե նկատեք, որ ընթերցանությունը գրավիչ չէ: Հակառակն անելը պարզապես սխալ վարքագծի դրսևորում է»⁸:

Տնտեսագետների համար սխալ վարքագծի դրսևորում կլինի, եթե չկարդան Թեյլերի աշխատությունը՝ առավելապես շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, որոնք հագեցված են տնտեսական ու սոցիալական հակասություններով ու մոլորություններով: «Սխալ վարքագիծ» աշխատությունը հայ տնտեսագետներին ուղղորդում է նոր ուսումնասիրությունների:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 261:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 14: